պայծառացուցին զեկեղեցին ընդարձակելով զլուսամուտս նորին, ծածկեցին զպատուհանն ուղղահայեաց 'ի գըմբեթին, զի ապակեայ կանթեղաք ծածկեալ էր յառաջագոյն, և իջանէր ջուր յանձրեւի. արարին փոքր գմբեթ 'ի վերայ նորա, և ընդարձակեցին զ6 պատուհանս նորին, բարձրացուցին զկամարն ամպիոնին, շինեցին նաև զսենեակս Խորհրդականաց, որ կոչի Ս. Մինասի Բաղ՝ և քարիւ յատակեցին զարտաքին գաւիթ վանաց, և նորոգեցին զայլ կարեւոր տեղիս։ Բացին զպատուհանս ամենայն սենեկաց Բեթղեհէմի վանաց, և նորոգեցին զերիս սենեակս քայքայեալ 'ի շարժէն։ Մեփեալ սպիտակացուցին և զեկեղեցին Հրեշտակապետի, ընդարձակեցին զաւագ դուռն ըստ առաջին ձեւոյն, և զպատուհանն։

Ի բողոքել Զաքարիա Եպիսկոպոսի առ Փոխարքայն Եգիպտոսի վասն անկարգութեան այլազգի դռնապանաց Տաճարին Ս. Յարութեան անասատելոյ հրամանի Արքային՝ գրեաց նա պատուէր առ Դատաւորն Երուսաղէմի, զի լիցին դռնապանք միայն անձինք 3 մնալ մշտնջենաւոր բանալեաց 'ի ձեռս նոցա։ Վասն պատարագի 7½, ուխտի 2, յաւուրս հանդիսաւոր տօնից 39 դահեկան առնուլ 'ի քրիստոնէից և բանալ զդուռն։ Ի ժամանակի բազմութեան բանալ զերկու վէրզկս, բաց 'ի սահմանեալ իրաւանց չպահանջել 'ի վանօրէից պարգեւս և զայլ նորանոր իրս, և 'ի պատուի ունել զուխտաւորս քրիստոնէից։

Ի պատահիլ երկրաշարժի յԵրուսաղէմ խախտեցան բազում եկեղեցիք և այլ հոյակապ շինուածք. անկաւ և գըմբեթն որ 'ի վերայ ոտնատեղւոյն Համբարձման Տեառն մերոյ 'ի լեառն Զիթենեաց։ Լատինք խնդրէին հրաման 'ի Դատաւորէն շինել զայն ըստ առաջին ձեւոյն, Հայք ունելով զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ, ընդդէմ կացեալ նոցա ջանային ինքեանք շինել զայն, և մինչդեռ վիճէին երկու ազգք, յարեան և Յոյնք եւ խնդրէին լինել բաժանորդ շինութեանն։ Լատինք մատուցին 'ի Ժողովի անդ Հէօճմէթ գրեալ ١١٩. թուէն, յորում էր հրաման 'ի տարւոջ միանգամ պատարագել նոցա 'ի ներքոյ գմբեթին, զի այլ Քրիստոնեայք պատարագէին 'ի գաւթի անդ 'ի ներքոյ վրանի՝ 'ի վերայ իւրաքանչիւր սեղանի իւրոյ, և 'ի սատ-